Նյու Յորք
4 փետրվարի, 2013թ.

Երուսաղեմի Հայոց Պատրիարք
Գերաշնորհ Տեր,Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկյան
Սրբոց Հակոբյանց Պատրիարքարանի Պատրիարք
14325 Երուսաղեմ
1

Գերաշնորհ Տեր,

Ռուալ Վալլենբերգի անվան միջազգային հիմնադրամի (ՌՎՄՀ) անունից շնորհավորհում ենք Ձեզ և փոխանցում մեր անկեղծ բարեմաղթանքները՝ վերջերս Երուսաղեմի 97-րդ պատրիարք ընտրվելու կապակցությամբ:

ՌՎՄՀ-ը լայն տարածում ունեցող միջդավանական հասարակական կազմակերպություն է, որի հիմնական առաքելությունն է պահպանել և հրապարակել **Ռաուլ Վալլենբերգի** և նրա նման քաջարի կանանց ու տղամարդկանց թողած ժառանգությունը, ովքեր վտանգել են իրենց՝ փրկելու անմեղ մարդկանց կյանքը: Մեր կազմակերպության անդամների թվում են շուրջ 300 երկրների նախկին և գործող ղեկավարներ, Նոբելյան մրցանակի դափնեկիրներ, ինչպես նաև հոգևոր և աշխահիկ կյանքի տարբեր բնագավառների հարգաժան ներկայացուցիչներ: Մեր գլխավոր գրասենյակը գտնվում է Նյու Յորքում, սակայն գրասենյակներ ունենք նաև Բուենոս Այրեսում, Բեռլինում և Երուսաղեմում: Բեռլինյան մեր գրասենյակները գործում են Հայր Մեր ավետարանական եկեղեցում՝ հովիվ Աննեմարի Վերների ղեկավարությամբ:

Մեր կողմից հարգանքի տուրքի արժանացած հերոսների և փրկիչների թվում կան զգալի քանակությամբ հայեր: Նրանցից քսանմեկը պաշտոնապես ճանաչվել են «Ազգերի Առաքյալներ»:

Corrientes Ave. 1145, Fl.# 11 1043 Bs As
Tel. / Fax 54-11-4382-7872
e-mail: irwf@irwf.org.ar

Diskin 9 A – 96440 Jerusalem
Tel. 972-2-625-7996 Fax 972-2-623-4430
E-mail: irwf@irwf.org.il

34 East 67th. Street New York NY 10021
Tel. 1-212-737-3275 Fax 1-212-535-6262
E-mail: irwf@irwf.org

www.raoulwallenberg.net

ՌՎՄՀ-ը մեծապես նպաստում է անհայտ հայ փրկիչների սխրանքների վրա լույս սփռելու և երիտասարդ սերունդներին նրանց թողած քաղաքացիական համերաշխության ժառանգությունը փոխանցելու գործին:

Շարժվելով նույն ոգով, մենք փորձում ենք փոխըմբռնման, փոխադարձ հարգանքի և հաշտության կամուրջներ կառուցել ազգերի միջև, և այդ առումով Հայաստանի ու իր ժողովրդի բարեկեցությանը (երկրի ներսում և սփյուռքում) շատ մեծ կարևորություն է տրվում մեր ծրագրերում:

ՌՎՄՀ-ի կազմում կան տարբեր ազգերի, էթնիկական և կրոնական խմբերի ներկայացուցիչներ, և մեր նպատակն է հարգանքի տուրք մատուցել բոլոր փրկիչներին՝ անկախ ազգային պատկանելությունից: Պատահական չէ, որ մենք՝ ներքոստորագրյալներս, հայ և հրեա ենք՝ համապատասխանաբար, և կիսում ենք ոչ միայն նույն արժեքային համակարգն ու ողբերգական պատմությունը, այլ առաջին հերթին ավելի լավ ապագայի համատեղ տեսլականը:

Գերաշնորհ Տեր, Երուսաղեմի մեր գրասենյակն ու բոլոր մյուս գրասենյակները ամբողջովին Ձեր տրամադրության տակ են: Մեզ համար ողջունելի կլինի Երուսաղեմի Պատրիարքարանի հետ ցանկացած համագործակցություն: Եվս մեկ անգամ օգտվելով հնարավորությունից, մաղթում ենք Ձեզ հաջողություն՝ այս կարևոր հոգևոր առաքելությունն իրականացնելու գործում:

Հարգանքներով՝

Էդուարդո Էռնեկյան
Նախագահ

Բարուխ Տենեմբաում
Հիմնադրամի հիմնադիր

Corrientes Ave. 1145, Fl.# 11 1043 Bs As
Tel. / Fax 54-11-4382-7872
e-mail: irwf@irwf.org.ar

Diskin 9 A – 96440 Jerusalem
Tel. 972-2-625-7996 Fax 972-2-623-4430
E-mail: irwf@irwf.org.il

34 East 67th. Street New York NY 10021
Tel. 1-212-737-3275 Fax 1-212-535-6262
E-mail: irwf@irwf.org

www.raoulwallenberg.net